

# ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՌԵՏՈՐԻԿԱ

Վերջին ժամանակների փիլիսոփայական գրականության մեջ առեղի քան յաճախակի են դարձել հաղորդակցության հիմնախնդրի արծարծումները, որոնք երբեմն իրենց խիստ տարամետ մտնեցումներով հաներձ, աներկբայօրէն համերաշխ են հասարակության ձեւաորման, կայացման ու քարզացման գործընթացում այդ երեւոյթի չափազանց կարեւորութիւնը հաւաստելու առումով: Հիմնախնդրի այսօրինակ կարեւորումը պայմանաւորուած է ոչ միայն մարդկային իրականութեան ճանաչման փոտ իմացաբանական հետաքրքրութեամբ, այլեւ նրա գործառնական (ֆունկցիոնալ) նշանակութեամբ, հասարակական յարաբերութիւնների, սոցիալական կեանքի կարմակերպման գործում նրա կիրառական արժէքով: Թերեւս նախ դրանով, եւ վերջին հաշուով դրանով է բացատրուում նաեւ այն բուռն ակտիւութիւնը այդ ուղղութեամբ, որ նկատուում է այսօր հասարակագիտութեան, հոգեբանութեան եւ սոցիոլոգիայի բնագաւառում: Որքանով հաղորդակցութիւն երեւոյթը իր անմիջական դրսեւորումն է ունենում տեղեկատուական գործընթացներում, այն յայտնուում է նաեւ ժամանակակից ամենաարդիական ու լայնամասշտաբ գիտութեան՝ ինֆորմատիկայի-կիրենտետիկայի ուսումնասիրութիւնների կենտրոնում, որպէս ինֆորմացիայի տեխնիկական տիրապետման, պահպանման, կարգաւորման եւ ուղղորդման բնական-կենդանի մոդել:

Սակայն, եթէ վերը նշուած բնագաւառներում, որպէս համեմատաբար երիտասարդ գիտութիւններ, հաղորդակցութեան հիմնախնդիրը ունի ոչ-շատ վաղեմի պատմութիւն, ապա փիլիսոփայութեան մեջ որոշակիացած, մասնաւորեցուած ձեւով, թէ որպէս այլ հարցերի յարակցութիւն այն արծարծուել է նրա սկզբնաւորումից ի վեր: Այն անփոխարինելի դեր ունի փիլիսոփայական ցանկացած ուղղութեան, ուսմունքի համար, որն այս կամ այն կերպ առնչուում է մարդու, մարդկային յարաբերութիւնների, հասարակութեան ինտիմների: Իսկ դերեւս անտիկ մշակոյթում արդէն դասական մշակման հասած հռետորիկայում, իբրեւ խօսքի միջոցով լսարանին, ունկնդրին, պուրցակցին ներգործելու գիտութիւն-արուեստում ուղղակի ելակէտային ու մեթոտաբանական նշանակութիւն ունեցաւ:

Այսուհանդերձ, նոյնիսկ ժամանակակից գրականութեան մեջ ակնյայտ է «հաղորդակցութիւն» հասկացութեան իբրեւ կատեգորիայի բովանդակութեան ոչ-միանշանակ ընկալումը, եւ ոչ միայն տարբեր բնագաւառների, այլեւ միեւնոյն գիտութեան մեջ՝ տարբեր հեղինակների մօտ: Իսկ հայալեզու գրականութեան մեջ այն կարիք ունի եթէ ոչ սպառիչ, ապա զոնէ հասկացութային բաւարար ճշգրտման: Ուստի իմաստ ունի նախ եւ առաջ որոշարկել այն բովանդակութիւնը, որն առեղի հարապատ է թուում «հաղորդակցութիւն» հասկացութեանը, կամ այն առաւել մօտաւոր ընդհանրացումը, որով հնարաւոր կը լինի միանշանակութիւն ապահովել մեր ինտրոյ առարկայի հետ նրա տարբեր առնչութիւնները ներկայացնելիս:

Անմիջապէս նշենք, որ «հաղորդակցութիւն» հասկացութիւնը մեզանում ունի չափազանց լայն կիրառութիւն: Այն գործածուում է թէ անկենդան-տեխնիկական միջակայքում կապերի ներկայացման (ջերմահաղորդականութիւն, էլեկտրա-, հաղորդակից անօթներ), թէ կենդանի բնութեան, կենսաբանական սպանշանների նկարագրութեան (մեղուները, դէֆինները, հաղորդակցում են...), թէ մարդկանց, հասարակական սուբյեկտների եւ մշակոյթների փոխներգործութեան յարաբերութիւնների բնութագրման (մարդկային հաղորդակցութիւն կենդանի հաղորդակցութիւն, հոգեւոր հաղորդակցութիւն եւ այլն) համար: Անգամ մասնագիտական գրականութեան մեջ յառակ չի որոշարկուում «հաղորդակցութիւն»

եւ «կոմունիկացիա» (communication), «հաղորդակցութիւն» եւ «շփում» (intercourse), «հաղորդակցութիւն» եւ «կապ» (tie, contact), «հաղորդակցութիւն» եւ «փոխապրեցութիւն», «փոխներգործութիւն» (interact) եւ այլ կուգորդութիւնների համեմատական բնութագրերը, որի հետեւանքում հնարաւոր են դառնում գիտական հաղորդակցութեան, տեսութի այլընթացման, տարրնկայման անցանկալի դէպքերը եւ որպէս տեսմին կիրաւորող հասկացութեան անթոյլատրելի բազմիմաստութիւնը, ոչ-միանշանակութիւնը: Նման իրավիճակում որպէս աշխատանքային մեխանիզմ կարող է ծառայել կոմունիցիոնալ (պայմանաւորուածութեան) սկզբունքը, որը կարող է ապահովել գոնէ որոշակի ընհանրութիւն ներկայացող նիւթի միասնական ընկալման առումով:

Սեպ հետաքրքրող հիմնականորի բերումով վերընշուածներից աւելի կարեւոր է թում «կոմունիկացիա» եւ «շփում» հասկացութիւնների բովանդակային համապատասխանութեան խնդիրը «հաղորդակցութեան» հետ, քանի որ մենք փորձում ենք հռետորութիւնը ներկայացնել կենդանի հաղորդակցութեան եւ դրա առաւել արտայայտուած դրսեւորում: Կարծում ենք, նման անդրադարձը արդարացուած է, որքանով աւելի քան նկատելի է դրա բանավիճակի արժարժումները մի շարք ժամանակակալից հեղինակների աշխատութիւններում:

Այս առումով, թէեւ փիճայարոյց, բայց աւելի ամբողջական է թում Մ. Ս. Կազանի վերլուծութիւնները նշում հասկացութիւնների կապակցութեանը: Ընդունելով կոմունիկացիայի ելակէտային նշանակութիւնը հասարակութեան կայացման գոյժընթացում, նա «շփում» հասկացութեան բիոլոգիկացիա (կենսաբանականացում) է համարում «կոմունիկացիայի» հետ նրա նոյնացումը, պնդելով, որ դրանք թէեւ կապուած, բայց արմատապէս տարբեր են թէ բովանդակութեան, թէ ձեւի, թէ նպատակի եւ թէ յարաբերող կողմերի կարգավիճակի առումով: Ըստ Մ. Կազանի, ի դէմս կոմունիկացիայի մենք գործ ունենք տեղեկատուութեան միակողմանի գործընթացի հետ, ուր ի սպառ բացակայում է յետադարձ կապի երեւոյթը եւ ի տարբերութիւն ստացողի (օբյեկտի), սուբյեկտի դերում (ակտի կազմակերպման, նախաձեռնման, ակտիւութեան եւ ինֆորմացիայի բովանդակութեան մշակման առումով) հանդէս է գալիս միայն մի կողմը՝ ինֆորմացիա (գիտելիք, գաղափար, գործնական հաղորդում, փաստական տեղեկութիւն, ցուցում, հրահան եւ այլն) տուողը: Նման կապ կարող է տեղի ունենալ ինչպէս մարդ-մարդ, այնպէս էլ՝ մարդ-կենդանի, մարդ-մեքենայ յարաբերութիւններում: Դա սակաւ արդիւնաւէտ կապի ձեւ է, ուր հաղորդող-հաղորդում-ընդունող միջակայքում տեղի է ունենում ինֆորմացիայի կորուստ, նուազում: Մինչդեռ շփման մակարդակում, որը կայանում է երկու սուբյեկտների (ոչ թէ սուբյեկտի եւ օբյեկտի, կամ որպէս օբյեկտ դիտուող անձի) միջեւ, առկայ է նոր ինֆորմացիայի համատեղ մշակում երկուստեք ակտիւ երկխօսութեան միջոցով, ուր արդէն ոչ թէ միայն մէկ կողմից հոսող, այլ շրջանաւորող ինֆորմացիայի քանակը աւելանում, հարատւանում ու ամբողջանում է:<sup>2</sup>

Հասկանալի է, որ «կոմունիկացիայի» եւ «շփման» այսօրինակ տարանջատմամբ Մ. Կազանը չէր կարող համաձայնել Կ. Չերիի կողմից կոմունիկացիայի սահմանմանը, որը ոչ միայն մարդկանց խումբը, հասարակութիւնը, այլեւ մշակույթը դիտում է որպէս մարդկային կոմունիկացիայի դրսեւորում, իսկ բուն կոմունիկացիան՝ որպէս «մասնակցութիւն», միմեանց հասկացում, փոխհամաձայնում, աւելին՝ միասնութիւն:<sup>3</sup> Անշուշտ, պարտեղ խօսքը չի գնում ֆիլիքական կամ նոյնիսկ ընդամենը գործողութիւնների միասնութեան մասին, որը, իր իսկ Մ. Կազանի լեզուով ասած՝ կոմունիկացիայի բիոլոգիկացիա կը նշանակէր: Այլ ենթադրում է այնպիսի յարաբերութիւն, ուր առկայ է ոչ միայն երկուստեք իրար հասկանալու, համաձայնուելու փաստը, այլեւ պզտցանքային

համերաշխություն, միմեանց յուրական դրսևորումներին արձագանգելու, համակիր լինելու հանգամանքը: Մյանք գործօններ են, որոնք անկախ նպատակադրումից, միշտ ներկայ են խօսքային հաղորդակցության մակարդակում եւ ապահովում են լեզուի կոմունիկատիվ ֆունկցիայի իրականացումը: Բառերը լինելով պուտ կոնտենցիոնալ բնույթի իմաստային սիմուլներ եւ ինքնին չպարունակելով որեւէ էմպատիկ խորհուրդ (էմպատիա - ուրիշի ապրումներին յուրական արձագանգման ընդունակություն, նրա զգացմունքների, անձի մեջ ներթափանցման, նրա աշխարհընկալմամբ տեսնելու կարողություն<sup>4</sup>), կենդանի հնչման պարագայում որոշակիորէն այլ նշանակություն են ստանում՝ իրենց վրայ կրելով արտայայտողի սուբյեկտի երանգաորումը, նրա արժեքային կողմնորոշմանը, բարոյահոգեբանական ու նպատակային դիրքորոշմանը համապատասխան : «Երբ տեղի է ունենում մտքերի փոխանակություն,- գրում է Տ. Շիրոտանին,- իւրաքանչիւր մարդ փաստօրէն անում է ըստ էության երկու տարբեր բան: Մի կողմից նա օգտւում է բառերից իբրեւ կատեգորիաների սիմուլներ, որոնք ուզում է հաղորդել ունկնդրին, միւս կողմից հասկանալ է տալիս իր սեփական վերաբերմունքը այն բանին, ինչի մասին խօսքը գնում է: Ինչ է նա մտադիր ասել, ցոյց է տալիս նրա արտայայտությունների բովանդակությունը, իսկ այն, թէ ինչ զգացմունքներ է ստաջացնում իր մեջ պրոյցի առարկան, արտայայտում է նրա խօսքի ոճում: Հետեւաբար անհրաժեշտ է տարբերակում ընել այն բաներում՝ մարդը ինչ է ասում եւ նա դա ինչպէս է ասում »:<sup>5</sup>

Մարդ էակը լինելով (գուցէ ատելի շուտ եւ ատելի շատ) զգացմունքային եւ յուրական էակ, եւ գոնուելով բնական, կամաւոր յարաբերություններում, անգամ շատ ցանկանալու պարագայում չի կարող իր խօսքն, ինֆորմացիայի արտայայտումը մինչեւ վերջ ու բացարձակ պոէզ, անջատել որպէս դրա վերապրում ունեցած իր տրամադրությունից, վերաբերմունքից, գնահատականից: Աւելին, մարդկային հաղորդակցության, մասնաորապէս դրա խօսքային ձեւի մի որոշակի քանակ (թերեւս դժուար որոշարկելի տոկոսային համեմատությամբ) մոտիւացում է ոչ այնքան օբյեկտիւ իրականության մասին իմացական բնույթի տեղեկատուությամբ (որը տուեալ դէպքում ատելի շուտ կատարում է արտայայտման առիթի, պատրուակի դեր), որքան յուրական, զգացմունքային համաձայնության, համերաշխության, աջակցության, վերջին հաշուով դիմացինի մասնակցության, միասնության նպատակով: Ահա, թէ ինչու, մարդկանց միջեւ կոմունիկատիւ յարաբերություններում (անկախ դրսևորման ձեւից) տեղեկատուական-իմաստային, «ինչ ասելու» անհրաժեշտությունից պատ, ատելի քան կարեւորում է բարոյահոգեբանական, աշխարհայեացքային միասնության, էմպատիկ նշանակության, «ինչպէս ասելու» հանգամանքը, որի շնորհիւ նաեւ, կամ գուցէ ատելի ճիշտ է ասել՝ նախ որի շնորհիւ էլ, եթէ ոչ առաջանում, ապա կայանում, ամրապնդում է կոմունիկատիւ իրավիճակը, հաղորդակցության գործընթացը: Եւ կրկին պէտք է համաձայնել Տ. Շիրոտանիի հետ, ըստ որի «անբաւարար է կոմունիկացիայի ողջախոհական ընկալումը՝ մէկը ուղարկում է ազդանշան, միւսի զգայական օրգանները որսում են ակուստիկ տատանումները եւ վերջինս ինտերպրետացիայի (մեկնել) է ենթարկում տուեալ տեղեկությունը: Դա արտացոլումն է Լասուելի յայտնի բանաձեւի՝ «Ով եւ ինչ հաղորդեց, ինչ արտացոլումն է Լասուելի յայտնի բանաձեւի՝ «Ով եւ ինչ հաղորդեց, ինչ եղանակով, ում, ինչ արդիւնքով»: Այս կերպ կոմունիկացիայի ուսումնասիրությունը հանգեցրում է սկրբնադիւրի, բովանդակության, թիրախի (ընդունիչի) եւ արդիւնքի որպէս մեխանիկական ամբողջի վերլուծությանը: Կոմունիկացիայի արդիւնքը դա ընդամենը արտաքին գրգռիչի արդեցությամբ ունկնդրի դիրքորոշումների ու վարքի փոփոխությունը չէ, այլեւ որոշակի համաձայնության ձեռքբերումը: Համաձայնությունը ընդհանուր աշխարհի պատկերի հաստատումն է նրանց մօտ,

ովքեր միատրուած են համատեղ գործողութեան»:<sup>6</sup> Այլապէս կոմունիկացիան սահմանելով ու սահմանափակելով ԿՄՈՒ ուղղորդուած ինֆորմացիայի առաքման ֆունկցիայով<sup>7</sup>, յիշեալ հեղինակները փաստօրէն «կոմունիկացիա» հասկացութեան ամբողջ ծաւալը վերագրում են նրա մէկ մասին միայն (այն էլ վերջինիս միակողմանի, մեկուսացուած, վերացարկուած բնութագրին, ուր կողմերից մէկը, անգամ բանական էակ լինելու պարագայում, հանդէս է գալիս որպէս ԿՄՈՒ կրատրական օբյեկտ, պասիւ ընդունիչ), իսկ մարդկային լիարժէք, երկկողմանի, միասնական կապի, հաղորդակցութեան երեւոյթը արտացոլում է «շփում» հասկացութեամբ:

Թերեւս կոնուենցիոնալ սկզբունքով կարելի էր համաձայնել հասկացութիւնների բովանդակային այսպիսի տարբերականան, դասակարգման հետ, եթէ հնարաւոր լինէր նրանց ծաւալների յստակ տարանջատումը, որոշարկումը թեկուզ իբրեւ սեռի եւ տեսակի փոխյարաբերութիւն: Թւում է, նման փորձ մենք ունենք ի դէմս Մ. Կազանի արդէն յիշատակուած ծաւալուն աշխատանքի: Ի թիւս այլ տարբերութիւնների (դրանց մասին խօսուել է վերեւում), նա հիմնական է համարում հաղորդատուութեան (իմա. կոմունիկացիա) եւ շփման ինքնատեւալիպացիայի (ինքնիրականացման) մեթոդների տարբերութիւնը. հաղորդատուութեան կառուցուածքը մենափօսական է, շփման կառուցուածքը՝ երկփօսական:<sup>8</sup> Եւ Կարգացնելով այս միտքը, հեղինակը կատարում է անդումներ, որոնք մեզնիս ասած՝ ապառ, իսկ ոչ-շատ մեղմ լինելու դէպքում՝ կարելի է վիճալարոյց համարել. «Ինչ խօսք,- գրում է նա,- կոմունիկատիւ հաղորդումը միշտ հասցեագրուած է ինչ-որ մէկին, որից նրա մենափօսական բնոյթը կարող է թուալ կասկածելի: Բայց պէտք է նկատի ունենալ, որ հաղորդումը ոչ-անձնատրուած (ինպերսոնալ) է, քանի որ այն ուղղուած է ցանկացած հասցեատիրոջ, եւ ոչ թէ որոշակի ինչ-որ մէկի կամ միակի (ինչպէս թերթային ինֆորմացիա, դաս կամ դասախօսութիւն, հոեւտորի խօսք, գիտական տրակտատ եւ այլն), դրա համար էլ այն ձեռք է բերում մենափօսութեան ձեւ, ուղարկուած բոլորին... այսինքն ընդունողներին որպէս օբյեկտների: Երկփօսութիւնը ինֆորմացիոն կապ է երկու անձերի միջեւ, որոնցից խրաքանչխրը դիմում է հենց այդ մասնակցին (partner) որպէս իր միակ ունկնդրի...»:<sup>9</sup>

Նախ, նկատենք, որ երկփօսութիւն հասկացութեան ծաւալի այսօրինակ ներացումը նրանից դուրս է թողնում մարդկանց հաղորդակցութեան այնպիսի դէպքերը, երբ մասնակիցների թիւը անցնում է երկուսից, եւ խրաքանչխրը դիմում է բոլորին կամ մի քանիսին միաժամանակ (օրինակ՝ «կոր սեղանի», պատլամենտական արժարժումների կամ խմբային ցանկացած քննարկման ժամանակ): Երկրորդ, երկփօսութիւնը (դիալոգ) բնաւ էլ չի նշանակում միայն երկուսի խօսք կամ երկուսի փօսակցութիւն, այլ երկկողմանի փօսակցութիւն, որն էլ բնաւ չի ենթադրում կողմերի անպայման եւ միայն երկուսը լինելը: Երկփօսութիւնը կայանում է քննարկող նիւթի շուրջ արտայայտուելուն կողմերի մասնակցութեամբ, եւ բնաւ էլ պարտադիր չէ, որ նրանք հանդէս գան խօսքի արտայայտման հարստար ծաւալով, մասնակցութեան բացարձակ համարժէք քանակով ու կարգավիճակով եւ նոյնիսկ արտայայտման ձեւերի ու եղանակների ճշգրիտ նոյնութեամբ: Հասիւ թէ կարելի է մերժել երկփօսական բնոյթը այն գործընթացի, ուր հայրը երկար խրատում-յորդորում է որդուն, իսկ վերջինս ժամանակ առ ժամանակ (թեկուզ խիստ սակաւ) արձագանգում է նրան համաձայնող կամ ժխտող որեւէ արտայայտութեամբ, ժեստով, դիմախաղով կամ նոյնիսկ շարժումով: Եւ, վերջապէս, որքանով է արդարացուած, ֆունկցիոնալ իմաստով ճշգրիտ երկփօսութեան եւ մենափօսութեան այսպիսի խիստ տարանջատումը, առաւել եւս հակադրումը, երբ մենափօսութիւնը կարելի է

հասկանալ առնուապն երկու իմաստով. առաջին, երբ մարդը արտայայտում է իր միտքը (մտքերը) ելոյթի կամ դիմումի ձևով, ուր անպայման է ունկնդրի առկայութիւնը եւ ենթադրուում է արձագանգման դէպքը (արձագանգման ձեւերն ու եղանակները կարեւոր չեն), երկրորդ, երբ մարդը խօսքի միջոցով դրսեւորում է իր մտքերն ու պացսմունքները, չկարեւորելով ունկնդրի առկայութիւնը, արձագանգման անհրաժեշտութիւնը, խօսում է, այսպէս ասած, իր համանր, ինքն իր հետ, կամ նոյնիսկ հենց ունկնդրի համար, բայց քննարկման չդնելով, չակնկալելով, չկարեւորելով արձագանգը:

Այս եւ նման հարցերի անորոշութեան պարագայում (սւելի ճիշտ է սսել՝ որոշակիութեան, բայց ոչ վերը յիշատակուած մօտեցմամբ, դասակարգմամբ) անընդունելի, արհեստական է թուում «կոմունիկացիա» եւ «շփում» հասկացութիւնների խիստ տարանջատումը, առաւել եւս, երբ ի թիւս հաղորդակցութեան այնպիսի բարդ գործընթացների, ինչպիսին է դասը կամ դասախօսութիւնը, նեղ իմաստով կոմունիկացիայի շրջանակներում է դիտարկում նաեւ հռետորութիւնը: Այստեղ խնդիրը ոչ թէ վերջինիս կոմունիկացիա լինել-չլինելն է, այլ այդ հասկացութիւնների ըմբռնման, դրանց բովանդակութիւնների աղեկուատ մեկնաբանութիւնը: Այն, որ «հռետոր» հնում (լատիներէն) նշանակել է լսարանի առջեւ ելոյթ ունեցող, դրանից միանշանակօրէն չի բխում, որ հռետորութիւնը գոյութիւն ունի միայն լսարանում, իբրեւ մեծաբանակ, պասիւ ունկնդրի (վերը նշուած իմաստով կարելի է նոյնիսկ սսել՝ ընդամենը ներկաների) եւ մենախօսութեամբ տարուած խօսողի միակողմանի կսպ, յարաբերութիւն: Նոյնիսկ եթէ հռետորութիւնը դիտենք որպէս ինչ-որ հարցի շուրջ անհրապէս (նոյնական չէ՝ անտարբեր) ունկնդրի առջեւ իրապէս ներկայացնողի, մեկնաբանողի ելոյթ, կրկին այն չի մնում մենախօսութիւն, առանց յետադարձ կսպի, չի կարող ընթանալ առանց ունկնդրի (մասնակիցների) տարբեր ձեւերով դրսեւորող արձագանգի (ակնարկ, համաձայնութեան-անհամաձայնութեան ձայնային կամ ժեստային արտայայտում, հարցեր եւ այլն) եւ դրանց պատասխան ու համապատասխան քայլերի, որով պայմանաւորուած է հռետորական խօսքի թէեւ նախապատրաստուած, բայց հնչման պահին ինպրովիկացիոն, «այսվայրկենական» բնոյթը: «Այսվայրկենականութիւնը,- գրում է Գ. Չ. Ապրեստանը,- նշանակում է, որ խօսքի վարգացման գործընթացում հռետորը պայով լսարանի տրամադրութիւնները, փոխում է ինչ-որ բան իր խօսքում, շէտում է որոշ դրոյթներ, որոնց կարեւորութիւնը նա գիտակցում է (անշուշտ ունկնդրի ռեակցիայից բխեցնելով-Ա. Վ.) հենց այդ պահին»: Միւս կողմից, ելոյթում առկայ «այն յուպունքը, որը ծնում է նրա թեմային, գաղափարներին ու մատուցմանը ստեղծագործական մօտեցման շնորհիւ, չի կարող չփոխանցուել ունկնդրին: Տեղի է ունենում անհատական յուպուածութեան տրամաֆորմացիա կոլեկտիւ յուպունքի, որը «յետադարձ կսպի» օրէնքով փոխանցում է ելոյթ ունեցողին, դառնալով անհրաժեշտ շփման կարեւորագոյն գործօն: Պարզ է, որ այս պահը մեծ տեղ է գրաւում հռետորական արուեստում...»:

Յետադարձ կսպի երեւոյթը բնաւ էլ պատահական չէ հռետորական պրակտիկայում. սւելին, նրա առաջացման թուացեալ տարերայնութիւնը իրականում կայմակերպում ու պահպանում է պահպանում է իրավիճակի գնահատման-որպէս գործընթացի անհրաժեշտ մեխանիզմ եւ իրավիճակի գնահատման-կողմնորոշման յտոակ չափանիշ: Այլ բան է, որ հաղորդակցութեան միւս կողմի համար այն ունի վուտ կոմունիկատիւ ֆունցիա եւ իրականացում է իբրեւ ինքնաբոխ արձագանգի դրսեւորում: Մինչդեռ, դարերի ընթացքում հռետորիկայի տեսութեան մէջ մշակուել է ոճական հնարքների մի ամբողջ համակարգ, որն ուղղուած է նախ եւ առաջ յետադարձ կսպի գործառնութեանը, հռետորի եւ

լսարանի միջև երկկողմանի հաղորդակցութեան կայացմանը, արժարժուող հարցին ունկնդրի ակտիւ մասնակցութեանը: Դրանցից են հռետորական (ոճական) դադարը, դիմումը, երկխօսութիւնը, հարցը եւ այլն: Նշուածներից խրաքանկաբար հռետորական խօսքը աշխոյժ, դիմամիկ եւ հնչման առումով բապերանագ դարձնելուց զատ, ապահովում է նաեւ հռետորի եւ լսարանի փոխըմբռնման, միասնութեան, փոխհամաձայնութեան կամ ներհակութեան բացայայտման հնարաւորութիւնը: Ահա, թէ ինչու, որոշ հեղինակներ չափապանց կարեւորելով այս գործօնը, համարում են, որ մասսայական էլոյթը պէտք է նմանուի լաւ պոյցի, պարպապէս ձայնի, պահուածքի, իրավիճակին թեմայի համապատասխանեցման յստակ ճշգրտումներով:<sup>11</sup>

Երկխօսութեան մեխանիկան հռետորի համար կարեւորում է ոչ միայն արդէն կենդանի էլոյթի ժամանակ, այլ դեռեւս մինչկոմունիկացիոն փուլում, սպասուող էլոյթին նախապատրաստուելիս, երբ վերջինս ամենայն մանրակրկիտութեամբ ուսումնասիրելով ենթադրուող լսարանի (մասնակցի) կապը, նրանց շահերը, հետաքրքրութիւնները, նախաահրութիւնները, արժեքային համակարգը (մի խօսքով այն ամէնը, ինչով կարող է մոտիւացուել նրանց մոտերը, զգացմունքները, տրամադրութիւններն ու վարքը), իր խօսքը մշակում է նրա հետ անընդհատ երեւակայական բանավեճի, երկխօսութեան, համոզման մեթոտով:<sup>12</sup> Այս գործընթացում հռետորը նախ փորձում է աշխարհին եւ մասնաւորապէս ներկայացուող հիմնահանդիւնն նայել ունկնդրի աչքերով (արդէն յիշատակուած էնպատիւայի երեւոյթը) եւ ապա որոշարկել այն հարցադրումներն ու առարկութիւնները, որոնք բխում են վարզացման տրամաբանութիւնից կամ որոնք կարող են ներգործող ներուժ ունենալ տուեալ պարագային: Այստեղ աւելի քան վճռորոշ են դառնում այն ընդհանուր եւ ուղղակի, կոնկրետ եւ փոխաբերական դիմումների ու հարցերի (լսարանին ուղղուելիք) նախապատրաստումը, որոնք միտում են ապահովելու ապագայ ունկնդրի ոչ միայն մասնակցութիւնը արժարժուող խնդրին եւ ընդհանրապէս գործընթացին, այլեւ ընդհանրութեան հասնելուն: Իսկ արդէն կենդանի էլոյթը, լինելով դրա իրականացման գործընթացը, բերում է իր շտկումները, ինպրովիպացիաները, վերախմբագրումները, որքանով՝ անկախ հռետորի պատրաստուածութիւնից ու փորձից, հնարաւոր չէ մինչեւ վերջ կանխատեսել սպասուող իրավիճակը, սպառել բոլոր հնարաւոր ղէպերը, որքանով դա վերաբերում է մարդկային հաղորդակցութեանը եւ տուեալ դէպքում՝ մասնակցի արձագանգին:

Անշուշտ երկխօսութիւն երեւոյթը հռետորական պրատիկայում թէ՛ ձեռի եւ թէ՛ ծագման ու ընթացքի առումով ունի իր խրայայտկութիւնը եւ որոշակիօրէն տարբերում է առօրեայ կեանքում երկու սուբյեկտների շփման սովորական եղանակից, բայց դրանից այն չի դադարում կողմերի հաղորդակցութեան (որոշ իմաստով կարելի է ասել աւելի արդիւնաւէտ), փոխըմբռնման, համաձայնութեան, յուսական համակցութեան, վերջին հաշուով՝ միասնութեան միջոց լինելուց:

Ցանկացած հռետորական էլոյթ հետապնդում է որոշակի նպատակ եւ, ունկնդրին համախոհ, համակարծիք եւ վերջին հաշուով նպատակի իրականացմանը մասնակից դարձնելու խնդրում հռետորի համար վճռական նշանակութիւն ունի մատուցուող խօսքի նրա ըմբռնումը, դիրքորոշումը, անմիջական, բացայայտ թէ՛ ոչ բացայայտ մասնակցութիւնը արժարժուող թեմային, որով լսարանը ներկայացուած հարցին կամ ներկայացուող տեսակէտին իր վերաբերումնքը արտայայտելով հանդերձ դառնում է վերանայման վերախմբագրման (հաղորդակցութեան, խօսքի) խրայայտուկ գործօն: Այս պարագայում հռետորը իր խօսքը կառուցում է (դեռեւս նախապատրաստական, մինչկոմունիկացիոն փուլից սկսած) ոչ միայն ըստ քննարկուող թեմայի կամ հետապնդուող նպատակի, այլեւ

ըստ ունկնդրի, լսարանի, վերաբերմունքի, արձագանգի, մասնակցությունների: «Ցանկացած բանառու էլոյթ ուղիղ կոնունիկացիայի դրսևորում է, ուր չկայ պատմելի խօսողի եւ լսարանի միջեւ,- գրում է Ե. Ա. Նոժինը,- Մշտապէս դիտելով լսարանը, հռետորը հնարաւորութիւն ունի խրաքանչիւր պահի գնահատել ունկնդիրների ռեալ վիճակը ըստ նրանց արտաքին տեսքի՝ ուշադրութեան, ակնարկի կամ պահուածքի այլ տարրերով (յետադարձ կայ) եւ անհրաժեշտութեան դէպքում՝ ճշգրտել իր էլոյթը... »:<sup>13</sup>

Ուստի, այսքանով իսկ, հասիւ թէ արդարացում է հռետորական էլոյթը սուբյեկտի եւ օբյեկտի միջեւ միակողմանի կայի ձեւ դիտելը, եթէ դա ընդհանրապէս հնարաւոր է մարդ-մարդ ապատ յարաբերութիւններում:

Անխերապահ կարելի է համարել նաեւ հռետորական խօսքի անհասցէ, «բոլորին» ուղղում լինելու մասին պնդումը, որի համար կրկին հիւնք է ծառայում հռետորութիւնը միայն մեծ լսարաններում անվտիւլում եւ լսարանն էլ որպէս պահի, անարձագանգ, կրաւորական եւ իր կայմով Կուտ պատահական, ընդհանրութիւններից Կուրկ տարաստեղ Կանգում տեսնելու տարակուսելի տեսակէտը:

Սկսած դեռեւս անտիկ մշակումներից հռետորիկայի տեսութիւններում առաջնային հիմնախնդիրներից են եղել հռետոր-լսարան, հռետոր-ունկնդիր կայի, վերջինիս բնոյթի, որոշակիութեան, միասնական թէ ոչ՝ բաց միշտ որպէս համեմատաբար կոնկրետ սուբյեկտ կամ սուբյեկտներ հանդէս գալու երեւոյթները, որոնց լաւ իմացութիւնը եւ որոշակիօրէն հասցէագրում դիմումը դիտուել է իբրեւ յաջողութեան, արդիւնաւէտ հաղորդակցութեան կարեւոր նախապայման: Եւ դա պատահական չէր, որքանով որ հռետորիկան ծագում է հին աշխարհում որպէս նախ եւ առաջ քաղաքական եւ դատական պրատիկայում խօսքի կառուցման ու մատուցման մասին գիտութիւն, որի կիրառութեան բնագաւառում ցանկացած կոնկրետ իրավիճակ ենթադրում էր առնուապէս երկու (իսկ յաճախ աւելի) կողմերի ներկայութիւն, իրենց շահերով, հետաքրքրութիւններով ու հետապնդած նպատակներով, եւ այդտեղ հռետորի էլոյթը չէր կարող ուղղում լինել կամ միշտ ու միայն ուղղում լինել բոլորին (թէպէտ տեղի էր ունենում բոլորի առաջ), լինել խօսք ընդհանրապէս:

Այս առումով աւելի քան տեղին է ու տպաւորիչ Ցիցերոնի յիշատակած յիբաի պոտաշարժ դէպքը հռոմէական դատարանում, որի գլխաւոր հերոս Անտոնիոսը (մեկ քաջ յայտնի Կորավարն ու հռետորը, յետագայում նաեւ պատմողը) ի պաշտպանութիւն դաժան հալածանքների ենթարկում նախկին Կորավար Ակուիլիոսի իր էլոյթի ժամանակ նկատելով հանդիսականների մէջ Գայ Մարցիոսին (սուժողի վաղեմի պիւսակցին, որը նոյնպէս խոշտանգուել էր մեղադրեալի ձեռքով), տառաջօրէն ամբիոն է քարշ տայիս վերջինիս, մոլեգնօրէն պոկոտում հագուստը՝ ի ցոյց դնելով դաժան կոտանքներից առաջացած խորը վերքերի սպիները նրա մէջքին: «Նա լաց եղաւ,- շարունակում է Անտոնիոսը,- եւ նրա արցունքները մեծապէս օգնեցին ինձ: Ես մի քանի անգամ դիմեցի նրան, յիշեցրի ռապի ընկերութիւնը Ակուիլիոսի հետ, կոչ արեցի պաշտպան կանգնել մեր բոլոր փառապանծ Կորավարներին. եւ արտաստեղի եւ չթաքցնելով արցունքներս, զթաքստութեան կոչեցի աստուածներին ու մարդկանց, համարադաքացիներին ու համակիրներին... »:<sup>14</sup>

Հասիւ թէ փորձառու հռետորը աչքաթող արեց որեւէ մասնակցի, եւ հասիւ թէ ներկաներից որեւէ մէկը անարձագանգ ու անմասն եղաւ այդ դիմումներին, կոչելին՝ դրանք անհասցէ եւ իրեն չուղղում համարելով: Սա հռետորական էլոյթի մի դասական նմուշ է, ուր աւելի քան ակնառու է ոչ միայն խօսքի ընդհանուր եւ կոնկրետ ուղղորդման, հասցէագրման, այլեւ յետադարձ կայի,

ապրումների տրամաֆորմացիայի, ընդհանրապես արդիւնաւէտ հաղորդակցութեան 2021-ի դրսեւորումը:

Ժամանակակից գրականութեան մէջ այս հիմնախնդիրների շուրջ կան բազմաթիւ նկատառումներ ու դիտարկումներ, որոնց ընդհանուր իմաստը կարելի է ամփոփել հետեւեալ ընդարձակ մէջբերումով. «Պերճախօսութեան հոգեբանական դժուարութիւններից մէկը հենց այն է, որ ամբիոնից խօսողը դիմում է ամբողջ լսարանին, բայց իրականում ասում է իւրաքանչիւրին, ջանադով նրան մասնակից դարձնել իր մտքերին եւ պատգմութեան: Հռետորական խօսքի անդիմութիւնը միշտ դատապարտում է նրան անպաշտօնութեան: Այդպիսի խօսքը ուղղուած է «ոչ մի տեղ»: Ահա թէ ինչու ճշգրիտ հաշուառումը ունկնդիրների կապմի եւ այն բանի, թէ ինչ տրամադրութիւններով ու ցանկութիւններով են նրանք այսօր հաւարուել, հռետորական վարպետութեան յաջողութեան յոյժ նախապայմաններից մէկն է՝ անհրաժեշտ անհատական եւ կոլեկտիւ մտքերի ու պատգմութեան ձեւաորման վրայ ապդելու համար, քանզի հենց դա է այն մերձադր նպատակը, որին պէտք է հասնի հռետորը տուեալ լսարանում: Այն հանդիսանում է նախադրեալ եւ հիմք հռետորի եւ իր լսարանի միջեւ շփման (աճող կապերի) համար, առանց որի հնարաւոր չէ յուսալ տուեալ մասսայական էլոյթի արդիւնաւէտութիւնը: Որքան մեծ է այդպիսի շփումը սոցիալ-հոգեբանական, ինֆորմատիւ-ճանաչողական առումով, այնքան արդիւնաւէտ է անհրաժեշտ, ընդ որում աճող, փոխհասակացումը: Եւ այդժամ միասնութիւնը գործում է նաեւ որպէս հռետորական արուեստի որոշակի սուբյեկտիւ գործօն»<sup>15</sup>:

Այսպիսով, հռետորութիւնը հանդիսանում է իւրատիպ հաղորդակցութիւն, կոմունիկացիա, շփում (ընդհանուր իմաստով դրանք նոյնական են) երկու սուբյեկտների (հռետոր-ունկնդիր) միջեւ, քննարկող հարցի շուրջ փոխըմբռնման, համաձայնութեան, աշխարհայեացքային, բարոյահոգեբանական ու կանային միասնութեան հասնելու մերձադր նպատակով, որի իրականացման գործընթացում հռետորի կողմից ի սպաս դրուող հնարքները, մեխանիզմներն ու միջոցները (բառային, իմաստային, ռճական, ձայնային, արտայայտչական, ժեստային, շարժողական եւ այլն) ներկաների ակտիւութիւնն ու մասնակցութիւնը իւրայատուկ կերպով ապահովելու հետ մէկտեղ, այն դարձնում են ատելի արդիւնաւէտ եւ, հոգեբանական ու գեղագիտական առումով՝ ատելի ընդունելի:

#### Գրականութեան ցանկ

1. տե՛ս, Մ. Ս. Կազան, Շփման աշխարհը, Մոսկուա, 1988, էջ 59 (ռուս.):
2. տե՛ս նոյն տեղում, էջ 145-147:
3. տե՛ս С. Cherry. On Human Communication. A Review, a Survey and a Criticism. Cambridge (Mass.), 1966, էջ 3-5, 7:
4. այս մասին մանրամասն տես Մ. Ս. Կազան, Շփման աշխարհը, էջ 260:
5. Տ. Շիրուտանի, Սոցիալական հոգեբանութիւն, Մոսկուա, 1969, էջ 133 (ռուս.):
6. Նոյն տեղում, էջ 120:

7. տե՛ս, Ա. Վրուդնի, Լեպուի, գիտակցութեան եւ գործունէութեան մասին, «Կոմունիկացիայի փիլիսոփայական-հոգեբանական հիմնախնդիրների մասին», Ֆոունպէ, 1971, էջ 5 (ռուս.):
8. տե՛ս, Ս. Ս. Կազան, Շփման աշխարհը, էջ 150:
9. նոյն տեղում, էջ 155:
10. Գ. Զ. Ապրետեան, Հոետորական արուեստ, Մոսկուա, 1978, էջ 177, 191 (ռուս.):
11. տե՛ս, Պոլ Լ. Մոպեր, Խօսքի արուեստի հիմունքներ, Մոսկուա, 1958, էջ 31 (ռուս.):
12. այս մասին տես Ե. Ա. Նոժին, Բանասոր ելոյթի վարպետութիւն, Մոսկուա, 1989, էջ 64 (ռուս.):
13. նոյն տեղում, էջ 8:
14. տե՛ս, Մարկ Տուլիոս Յիցերոն, Երեք տրակտատ հոետորական արուեստի մասին, Մոսկուա, 1972, էջ 168 (ռուս.):
15. Գ. Զ. Ապրետեան, Հոետորական արուեստ, էջ 171:

ԱՏՈՄ Ս. ՎԱՐԴՈՒՄԵԱՆ